ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հունիսի 1-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը Երևանում, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետում, պաշտոնական այցելություն է տալիս Մինիստրների սովետի նախագահ մեծահարգ Գրիգոր Ա. Արզումանյանին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

Հայոց Հայրապետը Իր այցելության առիթով ջերմորեն ողջունում է և շնորհավորում Հայաստանի վարչապետ պրն. Գ. Արզումանյանին և նրան ու հայրենի բարեխնամ կառավարությանը բարեմաղթում նորանոր հաջողություններ՝ հայրենաշեն նրանց գործունեության ճանապարհի վրա:

Այնուհետև Հայոց Հայրապետի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում սրտագին զրույց, որին ներկա են լինում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Հ. Մելքոնյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը: